



ԲԱԶՄԱՎԵՊ

Ո-ՑԺԵ · 1866 · ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՅՈՐԴ ՏԱՐԻ · ՅՈՒՆՈՒՍ.Ր.

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ

Պարբերական գրուած (ինչպէս են օրագիրք) գրողաց և կարդացողաց գրեթէ սովորութիւն է տարիներու յաջորդութեան ատեն խորհրդածութիւնը՝ ընել կենաց կամ բարոյական փոփոխութեանց վրայ . մենք այս անգամ աւելի բնական փոփոխութեանց վրայ կ'ուղենք խորհրդածել , քան քաղաքականին , և աւելի քաղաքականին՝ քան բարոյականին : — Որչափ ալ այս օր՝ 'ի 1866 թուիս անցեալ 1865 թուի առջին օրուան նման կարծուինք , քիչ շատ փոփոխութիւն կ'երսի մեր արտաքին կերպարանաց վրայ ալ , թող ներքինը և մոտաւորը : Եթէ լուսանկարութեամբ ¹ մեր կենաց սկիզբէն ինչուան հիմայ ամեն տարեգուխ դէմքերնիս հանած ըլլայինք , անշոշտ բաւական հետաքննելի տեսարան մը պիտի ըլլայինք մենք :

մեզի . որոշ որոշ պիտի տեսնէինք մեր կենաց սանդղոյն աստիճանները , որոնք թէ և ամենևին զուգահաւասար են ըստ տևողութեան , բայց ըստ բնութեան մերոյ և ըստ բարոյականի շատ և շատ տարրերին : Ի՞նչ զարմանք պիտի բերէր՝ եթէ մարդու մը տղայական , երետասարդական , այրական և ծերութեան կերպարանաց տարբերութիւնները կարելի ըլլար մէկ վայրկենի մէջ տեսնել . կամ անոնց անդադար փոփոխութիւլը նկատել . — Հազար ո՞րշափ ևս ամելի զարմանք պիտի բերէ բոլոր տիեզերաց անդադար փիխակերպութիւնն : Ասոնք նկատելու համար յիրաւի պէտք էր որ մարդս կամ շատ աւելի զօրաւոր միտք և զգայարանք ունենար 'ի բնէ , և կամ գոնէ աւելի հանդարտ ուշաղիր ըլլար . եթէ առջինը մեր կարողութենէն վեր է , երկրորդով քիչ մը ջա-

¹ Ֆոթոկրաֆի :

նանք . վասն զի շատ ալ օդուակար և
պիտանի է այս քննութիւնն :

« Փոփոխութիւնն , ըսած է հեղինակ
» մը , տիեզերաց մեծ տիրապետողն է ,
» գործավար ունենալով զժամանակ ,
» որ ամեն բան իր իշխանութեան տակ
» կը ձգէ » : Զկայ բան մը՝ որուն վրա-
յէն ժամանակ անցնի և ամեննին նոյն-
պէս թողու . ես և դու՝ անցեալ տա-
րուան եմ և դուն ենք , բայց ոչ բոլո-
րովին նոյն և նման . այսպէս ալ երկիր ,
երկինք , բոլոր տիեզերը . համաշխարհա-
կան տիրապետն կամ օրէնքն , թեղա-
փոխութիւնն , ամեն բան կը շարժէ , կը
քշէ կը տանի ՚ի ծանօթ կամ յանծա-
նօթ վախճան մը . նաև անսահմանու-
թեան կը միջոցն՝ որչափ ալ կակուղ
և անմարմին ըլլայ , դեռ կը մաշեցընէ ,
կայլափոխէ զամեն նիվթ՝ և նիվթա-
խառն արարած : Շնչաւորք և գործարա-
նաւորք (մարդ , կենդանիք , բոյպք , բո-
լորովին կերպարանափոխ կ'ըլլան ի-
րենց էութեան դադրելով (մահուամբ) ,
թանձագոյն մասերնին ցրութելով
կամ խառնուելով ուրիշ նիւթոց և
մարմնոց մէջ . անշունչներն ալ (հանք ,
քարինք , և այլն) մաշելով տաշելով ,
տեղափոխելով , կերպ կերպ ձև կը մըտ-
նեն , և այլն և այլն :

Ով որ իմաստասիրելու տարիքի մը
հասած է եթէ այս նոր տարւոյս և իր
ծնած տարւոյն աշխարհը լինէ , ան-
հուն և հիանալի յեղափոխութիւն կը
տեսնէ . և նախ իրեն նմանեացը վրայ
նայելով՝ իր ծնած ատեն որչափ որ մար-
դիկ կային երկրիս երեսին վրայ՝ գրե-
թէ անոնցմէ աւելին ալ եկեր և գացեր
են երկրիս վրայէն՝ մահուամբ . գու-
ցէ այն ատեն եղողներուն մէկ կէսն
ալ անցեր է մահուամբ . մնացեալքն
ալ ՚ի հարկէ մեծապէս փոխուեր են .
մանրիկ տղայքն կտրիճ մարդիկ եղեր
են . կտրիճք՝ ալւոր ծերեր . աղջկոնք
մնյըր են եղեր , մատաղամայրք՝ պա-
ռուած մակք : Եւ եթէ բնութիւնն կամ
տէրն բնութեան շնորհէ քեզի՝ ինչպէս
ումանց՝ երկայն տարիք կամ խոր ը-
սուած ծերութիւն մը , երկու իրեք ան-

գամ կենացդ առջև ուրիշ մարդկային
կեանք պիտի փոխուին , այսինքն երկու
երեք ազգ մարդկան պիտի անցնին , մէկ
երկու հազար միլիոննէն աւելի մարդ
պիտի ծնանի և մեռնի 80ամեայ դիւ-
րանցիկ կենաց մ'ատեն ... ի՞նչ ահեղ
անցք և կորուստ մարդկային կենաց :
Հապա թէ անոր հետ յիշենք անքան
կենդանեաց անմիւր ցեղից մահուամբ
յեղափոխութիւնն , ի՞նչ միլիոն միլիո-
նից պէտք է հաշուել : իսկ եթէ ան-
շունչ գործիաւորաց (բուսոց) կեանկերն
ալ , այսինքն բուսնիւ ու ցամբին ալ
ուղենք աւելցընել , չենք կրնար թուի
տակ առնուլ . միայն մէկ օրուան մը մէջ
ծնող կամ բուսնող և մեռնող ու էու-
թենէ դադրող արարածոց թիւն՝ ան-
բաւ միլիոններ կ'ըլլան . ուր թողունք
երկարակեաց մարդու մը ատեն եկող
գացողներն . ուր թողունք քանի մը
դար , քանի մը հաղար տարւոյ մէջ ,
կամ մեր պատմական ժամանակի ըս-
լրզնէ վեր եղածներն :

Սակայն թերևս այնչափ զարմանալի
կամ ափշելի չէ այս կենաց անընդհատ
և անդաղար հատնումը ու նորէնոր
բլինը , որչափ այն ամեն մէկ ան-
հատին վրայ հանդիպած յեղափոխու-
թիւնն իրեն կենաց ամեն վայրկենից
մէջ , թէ մարդու , թէ կենդանու ,
թէ բուսոց և ամեն նիւթոց : — « Օր ա-
» ւոր բլինէ զրան , և գիշեր գիշերի
» ցուցանէ զգիտութիւն » , վկայեց մեծ
հոգետեսն Դաւիթ . ապա 70 կամ 80
տարուան կենաց ամեն մէկ օրն ալ իր
բանը , իր գիտութիւնը , իր փոփոխու-
թիւնը , իր նորութիւնն ունենալով , ա-
նոնց ամենը մէկտեղ ի՞նչ բազմաթիւ և
բազմադէմ փոփոխութիւններ կը գու-
մարեն . . . եւ եթէ ունենց կեանքն առ-
օրեայ են , (եթէ մարդկան թէ անքանից
և թէ անշնչոց) բայց նահապետք մեր
ապրած են 900 տարի . կը գտուին միշտ
100ամեայ ծերք . փիզք և բազէք կ'ապ-
րին իբր 200 տարի . կրիսայք 300 տա-
րի . կեսք Ովկիանու թերևս 1000 տա-
րի . մայրիք Լիբանանու 2000 տարի :
Օր մը չնչին սերմ մը , հատ մը կամ

կուտ մը՝ այսօր մինակ անտառանման ծառ մ'եղեր է։ արմատն երկրիս տակ ՚ի խոր և ՚ի լայն տարածած, ճիւղերն օդոց մէջ, որոնց տակ ամբողջ հօտ մը, գունդ մը զօրշաց կրնան շուք գտնել. և այն կուտին ճղբուելուն օրուան և այսօրուան հակայ ծառիս միջոց՝ 2-3000 տարի անցեր է։ քանի քանի աղդ մարդկան եկեր անցեր են երկրիս վրայ. որչափ տէրութիւնք և թագաւորութիւնք սկսեր, և երկայն դարեր տեսեր, վերջապէս հինգեր, անցեր են, և դեռ այն պղտի կուտէն ելած ծառն՝ կեցեր է դալար. հաղարաւոր միջինք մարդկան ապրեր, գործեր, մեռեր են իր առջև. ինքն դեռ իր առաջին գարնան պէս կը ծաղկի կը կանաչնայ. — սակայն ամեն մէկ տարի որ տերեւները կը փոխէ կամ կը նորոգէ իրեն վրայ ալ նոր խաւ մը կամ շապիկ մը կ'աւելցընէ, և նորոգուելու ատենը կը հնանայ. անտարակոյս վկայ ժամանակին և անոր անդադար յեղափոխութեանցը . . . :

Հոս մարդուս մեծամութիւնն կը խոնարի, կը նուռաստանայ, կ'ամաչէ հին կոմել կամ արմատի մը դիմաց, որ իր պապանց պապերուն ատեն ալ նոյն պէս ծեր և հին ծառ մ'էր. հիմայ ալ անոնց յետին թոռան առջև նոյնպէս կայտառ և դալար կը կանգնի, նոյն շուքը, փայտը, պտուղը տալով: . . . բայց եթէ բոյս և եթէ կենդանի երկարակեաց՝ առանց բազմադիմի յեղափոխութեանց չի կրնար մնալ, չմեռնելու համար՝ պէտք է կեալ (ապրիլ). կեակըն ալ անշարժ չըլլար. ուրեմն ամեն կեակըն շարժման մէջ է. շարժումն ալ յարատե յեղափոխութիւն մ'է: Այս կենսական շարժմանց մէջ՝ գիտենք որ ամենէն կարևոր և զիմաւորն է սննդականն, առիթ և պահող կենաց. ամեն կենդանի թէ շնչաւոր թէ բուսական՝ մէկ մէկ կերպ մնունդ և կեանք ունին, բայց քանի մը ընդհանուր օրինաք ալ կը նմանին իրարու. ամենքն ալ համանիւթիւն կամ տարասեռ տարեղներով կը սնանին, և սովորաբար բուսեղներն են թէ կենդանեաց և թէ նոյն խակ բուսոց

մնունդքն. կենդանեաց ամբողջ իսկ կերակուր ըլլալով, իսկ բուսոց՝ իրենց փրտած մասերովը, որ հողոյ և ջրոյ ձեռքով նոր բուսոց մարմին կը դառնան, ինչպէս նաև կենդանեաց: Ոնանկ որ այս ձեռքս ալ որ հիմայ սա տողերը կը գրէ, և այս թուղթս՝ որոյ վրայ կը գրուի, և այդ կարդացողիդ աչքերն՝ մեծաւ մասամբ յիշեալ բուսական մասերէն ձևացած են, և անոնց հետ ուրիշ կենդանական, քիչ մ'ալ անդործիական արարածոց տարեղներէ: Այս առնցմէ զանգուած, ձևացած, կերպարանած ենք մեր նմանքն՝ հանդերձ իրենց ամեն գեղեցկութեամբն և փափկութեամբն. և ինչ փայլ որ կուտան մարմնոց՝ գովասանք, սիրահարը, կամ ինքն իսկ ճշմարիտն բնութիւն այն ամենն ալ անսարդ և չնչին (երբեմն և գարշելի) նիւթերէ առնուած են, և դարձեալ ՚ի նոյնս պիտի դառնան: Զափաւոր տարիք մ'ունեցողն արդէն առանց իմանալու քանի մ'անգամ այն նիւթերով փոփոխած է գրեթէ բոլոր մարմնոյն զանգուածը, հազիւ քանի մ'ոսկային մասունք նոյն պահելով: Շատ չնպարտանանք վրանիս, կամ զարմանալան բան մը չկարծենք զանգուածնիս: . . . Բայց արժան է որ զարմանանք անոր կազմութեան կերպին վրայ. այն որ նման է հեղեղատաց, ջրվիժից և գետոց, որոյ վրայ երբ այլ նայիս՝ միշտ նոյն և նման կ'երևան, բայց և ոչ օր մը, ժամ մը, և ոչ վայրկեան մը նոյն են. դիտած կէտիդ միայն դատարկ տեղը նոյն է, այլ տեսած ջուրդ սահեցաւ անցաւ, և տեղը անդադար ուրիշ նոր ջուր կուտ գայ. և ինչպէս այս վայրկենիս մէջ, ասսանկ այլ ՚ի սկզբանէ հետէ կ'ըլլար: Այս օրէնքով (թէ և քիչ մը ծանր և զանդալ կերպով) կ'ըլլայ մարմնոց փոփոխութիւնն՝ ի կենդանիս և ՚ի բուսականս, թէ և այս ծանրութիւնն կամ զանդադութիւնն այլ մեր տկար տեսութենէն կամ ըմբռմունքէն է. հեղեղատին սահիլ անցնիլը և ջրերուն միշտ նման բայց նոյն շլլալը՝ դիւրակ կ'իմանանք մենք դրսէն դիտելով. բայց

եթէ կարելի ըլլար մեզի մեր էութենէն դուրս հանել աչք մը և դիտել ըզմեզ, շուտով կը տեսնէնք մեր հեղեղատի պէս դիւրանցուկ կենաց և էութեան վրայ եղած մշտաշարժ յեղափոխութիւններն ալ... Սակայն մենք բանաւոր հեղեղակը՝ կրնանք նաև առանց բոլորովին ինքնիրեննէս դուրս ելլելու՝ իմանալ և տեսնել մեր մէջ յեղափոխութիւնները, գոնէ տարի տարուան վրայ, կամ քանի մը տարիներէ ետև։ — Ուր է, ով պատանեակ, այն թարմ և կակղիկ կերպարանքդ և աղուական ծիծաղդ՝ զոր դեռ քու երախայ եղբարցդ վրայ կը տեսնես։ — Ուր է, ով երիտասարդ, քու մանկական աղարծի դէմքդ, և մանաւանդ տղայական պատի զրօսանքը և նիւթաք՝ մեծամեծ զուարձութիւններդ։ — Ուր է, ով մարդ կատարեալ հասակի, քու երիտասարդական երազներդ։ ուր են այն վառվուոն գոյները՝ որովք զաշխարհ ցանցելով կ'ողէիր որսալ գեղեցիկը, տիրել տկարին, և երկրիս վրայ յիշատակ մը թողուլ։ — իսկ դու, ով ծեր, կրնաս անցեալ հասակիդ թողած սահուն յեղափոխութիւնը տեսնել ՚ի հայելին, ներքինն ալ կրնաս փնտուել խղճիդ և երկար մոտածութեանցդ մէջ, որոց շատը կարծեմ անկատար անցան, և շատն ալ սնուակի էին։ Եթէ քիչ մ'ալ առաջ երթանք, դիմացնիս ինչ կ'ելլէ... կենաց ճամբանիս կը հատնի, անել և անդարձ փոս մը կը բացուի, ուր հարկ է ընկնիլ ծածկուիլ։ մեր երկրաւոր էութեան մեծագոյն յեղափոխութիւնն պիտի ըլլայ անոր լընալուն ատեն։ և թէպէս յիշատակն ահաւոր և տիրեցուցիէ, բայց գործը ստոյգ է, ինքն ալ ամենաստոյգ է. մահն։ մեծ, զօրաւոր և անփախչելի յեղափոխիչ մարդկութեան։ Սակայն փուճ տեղ և անիմաստաբար շվախենք չդարշինք։ մահն չէ թէ անշունչ դիակնացեալ մարմնոյն կերպարանքն, կամ անոր հօղու տակ առած պժգալի փոփոխութիւն և քայքայումն է. ասոնք, և հիւանդութեամբ ու վիրօք եղած այլ այլութիւնքն ուրիշ նիւթական տարե-

րաց օրէնքն են։ մահն՝ անոնց հետ բանշոնի. մահն՝ ճարպիկ ձեռք մ'է, երբեմն հրեշտակի լուսածդի տեպով, երբեմն դժոխապէմ գողի մը, որ երկրաւոր կեանքը կը դադրեցնէ. ամենաշուտ ըոսպէի մէջ զնողին կը զատէ կը հանէ 'ի մարմնոյն. և ահա այս է իր գործն, այսչափ է ինքն իսկ։ — Արդարե երկրաւոր մարդուս մեծագոյն յեղափոխութիւնն է այն, և կենացը վերջին հանդէսն :

Սակայն ինչ է այդ կարճիկ կեանքն՝ մարդուս անվախճան էութեանը դիմաց։ իր թողած, լուծած, մեռած մարմինը՝ զեռ հազարներով և գուցէ բիւրաւոր տարիներ ալ պիտի թափառի ուրիշ տարերաց հետ, որոնց մէ երբեմն ելեր ձևացեր էր։ Բայց իր էական մասն, բռն ինքն, այս կամ այն մարդն, որ ոչ կը բաժնուի, ոչ կը լուծուի, ամեն մէկ անհատն, միով բանիւ հոգին, կը մնայ և միշտ պիտի մնայ։ իր անցեալ երկրաւոր կեանքն՝ և ոչ շուգի մը չափ կ'արժէ անկէ ետև իր նոր և ճշմարիտ կենաց առջն, որ չերևիր աշաց, և ոչ մոտաց բացայայտ կ'իմացուի, բայց եթէ հաւատով և սիրով հաստատապէս բռնենք քանի մը լուսաւոր գամեր, զոր ճշմարտութիւնն սուրբ կրօնից ձեռքով գամեր է անշարժապէս մեր խղճին և սրտին մէջ։ և հասարակաց ամենայն դարու և տեղեաց վկայութիւնն ալ միշտ հաստատեր է և պիտի հաստատէ։ Եթէ փոփոխուելով ալ չի ֆճանար մարմինն, հապա որչափ աւելի հոգին՝ որ մարմնոյ կեանքն էր, և աննիւթէ է, որով և անապական պիտի մնայ։ . . .

Սակայն եթէ աննիւթը ըլլալով՝ նիւթական օրինաք չայլայլիր հոգին, միթէ աննիւթից ալ աննիւթական օրէնքներ չկան՝ որովք և յետ մահուն կարենան յեղափոխութիւններ ունենալ։ Ահա ասոր կը վկայեն հաւատոք դարուց և ազգաց, և յայտնութիւն սուրբ կրօնից։ և նոյն ինքն իւրաքանչիւր անձին խիղճն՝ ՚ի գործել չար կամ բարի, կամ 'ի բաղձալն երկրէս վեր և դուրս բաներ։ —

Ա.յո՛, հողինիս ալ պիտի ունենայ յե-
ղափոխութիւն, որ պիտի սկսի 'ի մա-
հու մարմնոյն, և մեծ յեղափոխութիւն
պիտի ունենայ, դուցէ և անդադար յե-
ղափոխութիւն մը՝ յառաջելով յան-
ձայր, յանլախճանան լրութիւն մը, յան-
մահութեան անդ. ինչպէս հոս երկրիս
վրայ ապրելով կը գիմէր կարճ և շու-
տավերջ հնատունուքեան մը, որ մա-
հուամբ կը գաղցէր:

Հո՞ս ոչ փիլիսոփայից և ոչ աստուա-
ծաբանից հետ կ'ուզեմ քննել մեր 'ի
հանդերձեալն յեղափոխութիւնները .
բայց որովհետև այս և հոս է մեր ճշմա-
րիս և էական յեղափոխութիւնն, ինչ-
պէս կը ցուցընեն թէ աստուածաբանկը
և թէ փիլիսոփայք, անկարելի է զանց
ընել և չյիշել, որ եթէ մեր կենաց
վախճանն՝ հանդերձեալ և անվախճան
կենաց մը համար է, և եթէ կրօնք կը
հաւաստէ՝ որ այն հանդերձեալ ան-
վերջ կեանքն երկու տեսակ է, ինչպէս
այս տեղի կեանքս ալ, բարի և չար, և
թէ հարկաւ երկուքն ալ տարբեր յե-
ղափոխութիւններ պիտի ունենան, ու-
րեմն արժան է որ մարդ այս երկրաւոր
և կարճ կենաց մէջ՝ իր մեծ և բուն կե-
նաց բազգը շտկէ այնպիսի ապահովու-
թեամբ՝ զոր միայն ճշմարիտ կրօնքն կը
նան տալ: Եւ ահա ամեն խելացի և լաւ
մարդ ալ այսպէս ըրած է, կ'ընէ, և
պէտք է որ ընէ, երբոր իրեն ալ կար-
դը դայ կարճ կենաց մը մէջ յեղափո-
խութիւններ ընելու կամ կրելու այս
երկրիս վրայ. — որուն գառնանք նորէն
նայելու և քիչ մ'ալ զարմանալու իր
բնական յեղափոխութեանցը վրայ:

Քաջ բնագէտ և բարոյադէտ իմաս-
տունն (Սոլոմոն) վկայեց երբեմն թէ
« Ազգ երթայ և ազգ դայ, և երկիրս
» յահիտեան կայ »: Եւ յիրաւի նայե-
լով մարդկան ցեղին անդադար ծնանե-
լով և մեռնելով անցնիլը, և նոյն իսկ
ամբողջ ժողովրդոց կամ ազգաց երե-
նալը երկրիս մէկ կողմը, և յետոյ՝ եր-
բեմն բոլորովին ծածկիլ ու անհետա-
նալը, ամենուն անստարակոյս կ'երեւի
այս խօսքիս ճշմարտութիւնը. և ըստ

այսմ կ'ըսուի երկրիս յաշխուեան մա-
լը : Բայց նոյնպէս ալ անտարակոյս է
թէ երկիրս որչափ ալ մնացեր է կամ
պիտի մնայ՝ ոչ երբէք նոյն և նման պի-
տի մնայ, այլ իր մնուցած կամ հանած
արարածոց պէս ինքն ալ միշտ ՚ի յե-
ղափոխութեան է. մանաւանդ թէ ինքն
որ կ'ըսուի մայր ամենայն կենդանեաց
և բուսոց, իր երկարժամանակեան կու-
տութեան ատենն անգամ փոփոխական
ըլլալով՝ իր զաւակներն ալ նոյնպէս
յեղափոխիկ ծնաւ, ըրաւ և կ'ընէ: Եր-
կրաբանք կը տեսնեն և կը ցուցընեն իր
երեսաց վրայ բիւրամեայ պառաւու-
թեան կոնճմտուք, այլայլովթիւն, մե-
ծամեծ և ուժգին յեղափոխութիւններ.
որոնցմէ աւելին ալ կը գուշակեն ան-
տարակուսաբար իր ծոցին, իր ընդերաց,
իր խորոց և փորոց մէջ ըլլալ և ըլլալ ան-
դադար. — և եթէ ստոյգ է՝ որ իր կե-
զրոնը, այսինքն քանի մը մղոն իր երե-
սէն վար կամ 'ի խոր իշնելով՝ անկէ
անդին եղած նիւթերը բոլոր հալած
կամ կրակ կտրած են, նոյնպէս ալ ըս-
տոյգ է որ այն ներքին հնոցը՝ ստորերկ-
րեայ կրակը՝ մեծազոյն պատճառ մ'է
իր ներքին և արտաքին յեղափոխու-
թեանց և այլակերպութեանց, ողք ա-
տենօք շատ աւելի մեծազոյն և սաստ-
կապէս եղած են, հիմայ ալ դեռ ան-
պակաս կ'երևեն. մանաւանդ եթէ եր-
կրաբանից աչօք՝ տարիներու տեղ դա-
րեր համբենք. — վասն զի անանկ մեծ
և երկարակեաց մօր մը (երկրի) տարի-
ներն ալ պէտք է որ մեր դարերէն եր-
կայն ըլլան: Շատ զգալի կ'ընեն այս փո-
փոխութիւնները հիմայ՝ երկրաշարժք,
ողք զրեթէ ամեն տարի կը հանդիպին
երկրիս մէկ կողմը, և հրաբուղիք՝ որ
անոնց զվանաւոր պատճառն են, (թէ և
ասոնք միայն որոշեալ տեղուանք կ'ե-
րևին հիմայ) . — այս եսքի տարիներուս
մէջ նաբոլիի աշխարհածանօթ վեսովվ
երին սովորականէն աւելի ծխել, եռալ
և պոռթկալը՝ դրեթէ աչքերնուս դի-
մաց է, և անոր բաժակէն վիժած լա-
ւան ու խանձերը դեռ իրենց տալու փո-
փոխութեան ճամբուն մէջն են, դեռ

վազուածքնին տաք է ու չեն յօդնած դաղրած. միայն այս մէկ հրարուխ լեռին ծոցէն փսխած միխիրն՝ հաշուած է որ բաւական էր բոլոր ցամաք երկրիս երեսը ծածկելու. և քանի մը անգամ ալ ծածկելու. Մեղի համար՝ յիշելի է մեր ծեր Արարատեան Մասիսը, որուն հին հրարուխ մ'ըլլալն շատոնց ծանօթ էր. գիտէինք և կը տեսնէինք անոր կը ռնակը անուանի հազարամեայ վանք մը, Ս. Յակոբ, և քիչ մը վար աւելի հին գեղ մը, Ակոռի. և ահա ասկէ միայն 25 տարի առաջ՝ մեր Հայոց ծեր մայրն չգիտեմ ինչ ծնանել ուզելով՝ հնցած սկցած կողերէն խառնափնդոր տղմասիկ նիւթերով և ծուխերով՝ քարեր ժայռեր՝ պոոթկալով՝ ահագին որտամաք և մեծ ժաժով, իր գագաթէն ալ մեծ կտոր մը փրցըներով՝ վար գլորեց, յիշեալ վանքն ալ գեղն ալ, բոլոր անոնց միաբանօք և բնակչօք, և իր սոուրոտն եղող հովիներով և հօտերով՝ ջախջախեց ջարդեց ծածկեց, քանի մը հազար հոգի, (բաց յանասնոց) մէկ վայրկենի մէջ սպաններով. և մեծ փոփոխութեան նշաններ թողլով՝ թէ իր վրայ և թէ ինչուան օրով ճամբայ հեռու չէն և անչէն տեղերու մէջ. շատ ջրերու ընթացք փոխուեցան, կամ ծածկուեցան կամ նոր յայտնեցան. տեղ տեղ ըներ ձևացան, տեղ տեղ փոսեր բացուեցան. հազարաւոր տուններ կործանեցան հեռաւոր քաղաքաց և գեղերու մէջ: Եւ դեռ այդ սասանութիւնն Մասեաց կամ Արարատայ՝ շատ մեծ խաղ մը չէր երկրիս. և ոչ անկէ ետքը եղող, և մեղի աւելի մօտերը, ինչպէս Պրուսային, Էրզիրումին, և այլն. և որոց մէ շատ աւելի սաստիկ և մեծապէս յեղափոխիչներ տեսած է մեր հայրենի աշխարհն իր զանազան կողմերը, մանաւանդ յԱյրարատ, 'ի Ղավրէժ, 'ի Վան, 'ի Գանձակ, յԵրզնկա, և այլն. միայն այս ետքի յիշած քաղաքը՝ տամն անգամէն աւելի կործանած է, և երբեմն մեծաւ մասամբ: Սակայն ինչ են այդ ամեն ժամք և փլածք Հայաստանի՝ երկրիս բոլոր կողմանց առջև, մանա-

ւանդ այն կողմանց՝ ուր հրարուխը աւելի շատ են, կամ դեռ կենդանի ու վառուն են: Հիմկու հիմայ երկրիս վրայ 300ի չափ քիչ շատ կենդանի հրարուխ կը ճանցուի, իսկ մարած կամ մարմրածներու թիւն հազարներ կ'անցնի. հարիւրով կրնամք համբել. միայն մեր աշխարհին մէջ: Մօտեցընենք մըտք այս ամենուն մէկմէկ եւեկտրական մանաւանդ թէ ստորերկրեայ պատրոյդ՝ և վառենք, (և ենթադրութիւն չկարծենք, վասն զի օր մը ամենն ալ վառած էին, և կրակ, մոխիր, լաւա, տիղմ, քար, և այլ պէսապէս նիւթեր կը ցատքեցընէին) և տեսնենք, չէ անոնց ահեղ և զարմանալի տեսարանը, հապա ընելու այլայլութիւննին երկրիս շէն և անշէն մասանց վրայ. — և ահա կարծածնէս աւելին ըրած են անոնք, և դեռ պիտի ընեն: — Շնորհյով, և անոնցմէ աւելի ներքին կրակով և ուժովը՝ երկիրս այն կերպարանքն առեր է ինչ որ հիմայ աշխարհացուցից վրայ կը տեսնենք. — անով ձեսցեր են ծովք և ցամաքք. անով ցամաքին եղերքն առեր են այն սուր ու բութ անվիւնները, այն ցոկեալ ձեսերը. անով բացուեր են վոսպորնք և ձիպլալդարք. որոց երկու կողմերուն ներս ու գուրս ելած մոտած մասերը դիտելով՝ կրնաւ աչք բացօք տեսնել թէ ինչպէս երկու շրթանց պէս զիրար համբուրելու յարմարած են, ինչպէս ատենաք յիրար կպած են եղեր, և ինչպէս ուժգին ցնցում մը ճըլքեր պատուեր է միակերպ երկերը, հեռացուցեր, երկու պարիսպ դարձուցեր է, և ժիր ու պատրաստ ծովն՝ մէկէն մէջ վաղերով՝ ինքն եղեր է նեղուց մը, զանոնք ըրեր է երկու ախունք. որով հոս Սահա Եւրոպիայէն կը զատուի, հոն Եւրոպէ յԱփրիկիոյ. ուրիշ կողմեր ալ ուրիշ մեծ և փոքր աշխարհք, ինչպէս Գաղղիս յԱնդզիոյ, Սիկիլիա յիտալիոյ, և այլն:

Հապա այն մեծ կամ փոքր ծովածոցք և գոգք, որ ցամաք երկիրներու մէջ կիսակլոր կամ մահկաձև տարածուած, շահաստան քաղաքաց գեղե-

ցիկ նաւահամնդիստներ կու տան, կամ ամուր և անառիկ բերդեր . անոնք ինչպէս ձևացեր են . — յայտնի է որ ոմանք երկար դարերով ծովուն ծփանքէն ծեծուելով (կամ ինչպէս կ'ըսուի՝ կերուելով) մաշեր խորացեր են, և կամ աւելի ստուգապէս՝ սաստիկ ցընցմամբ մը բացուեր են, շատ հեղ ցամաքի մաս մը կլլելով և ընկրղմելով, և երբեմն, ափսոս, անոր հետ՝ քաղաքներ և գեղեր հանդերձ բիւրաւոր բնակչօք : Հոլանտա գացոյը 'ի հարկէ չկրնար չզարմանալ անոր մայրաքաղաքին (Ամսդերտամի) վրայ . քաղաք մը՝ զոր մարդկային ճարտարութեան մեծագոյն ճգանց մէկն բոներ է և կը բռնէ ծովուն անդադար բռնութեանց և կոռուց դէմ, կ վայրկենէ վայրկեան կլլուելու հէտը՝ աշխարհիս ամենէն կենդանի վաճառականութեան կեզրոնից մէկը կ'ընէ : Ամսդերտամը տեսնելէն ետև կը հրաւիրեմ տեսլասէրը քիչ մ'ալ առաջ երթալ դէպ յարեմուաք, տեսնել այն մեծաբոլոր գողեր և ծոցերը, ուր ընդարձակ և բազմամարդ երկիր մը կար (Տորդ) . յամին 1446 պատուեցաւ, ընկղմեցաւ, ծածկեցաւ 100,000 հոգւով և անբաւ շէնքերով, և այսօր հոն տեսած միայն ալիք, միայն ծովն է : Անկէ նոր (1556) ջինու մէջ աւելի մեծ և բազմաբնակ գաւառ մը՝ բոլորովին 'ի գետին անցաւ, տեղը լին մը ծածկեց : — Յամին 1663 կանադայի եղերը հարիւրաւոր մղոն երկայն ամբողջ լերանց շարք փլան և ծածկեցան 'ի ծովէ : 1692-3, Սիկիլոյ մէջ 54 քաղաք՝ և հազարաւոր գեղեր և 60,000 հոգի կորսուեցան . ուրիշ անգամ մը՝ Ակալիունիա լսուած քաղաքն բոլոր բնակչօքը անդնդասոյզ եղաւ : Մոլուգեան կղղեաց մէջ մեծ լեռ մը անանկ իջաւ սուզաւ յանդունդս, որ դեռ իր խարսխին ձևը կու ցըցընեն զինքը կըլլով ջըրեն՝ լճով մը : Սոդոմ Գոմոր և անոնց ընկեր քաղաքները կլլող վիճակ ինչուան այսօր զարմանաց և արհաւրաց տեղ մ'է, այն ինքն է Մեռեալ ծովին, որ ուրիշ ծովերու երեսէն հա-

րիւրաւոր ոտք վար խորացեալ գոգացեալ է հովտին մէջ : — իսկ ծովուն ընդարձակութեան մէջ շատ անգամ իրեն մեծամեծ կենդանի կետերուն (պալենայից) պէս մեծ և փոքր կղղիք կ'երեսան և կը ծածկին . — դեռ երկու երեք տարի առաջ կասպից ծովուն մէջ պղտի կղղի մը դուրս ելաւ և նաւողները զարմացուց : Բաց յայլոց՝ (ոմանց վիտնոց կարծիք է թէ) և այն Պղատոնի գերահոչակ Ամանդեան աշխարհը մեծ կղղի մը ըլլայ ստորասուզեալ . թէ և ումանք դեռ երկրիս ծանօթ և անծանօթ կղղեաց կամ Ամերիկայի վրայ կը փընտուն զանիկա . և մէկն ալ դեռ քանի մ'ամիս առաջ հրատարակեց իր կարծիքը, թէ Ամանդիա ըսուածն՝ լոկ երկրի մը հայելաշաղ՝ կամ կրկներսոյթն եղած ըլլայ : — իսկ ցամաք երկրի վրայ՝ հրաբուկներէն զատ՝ գետոց ըրած և կրած յեղափոխութիւնքն խիստ շատ և զգալի են . հոս վկայ են հին քաղաքներ, որ երբեմն անոնց եղելքը նստած և ալիքնին կը խմէին, յետ դարուց ծարաւ մնացին իրենց տեղը, մինչ գետերն երբեմն կամաց կամաց սահեցան հեռացան, իրենց նոր հուն նոր հովիտ բանալով . երբեմն սաստիկ բռնութեամբ լեռներ ալ ճղքելով ժայռեր ալ գլորելով նոր ճամբաններ բացին . — ծանօթ են մեր աշխարհագրութիւն գիտցողին (թողլով ուրիշները) երասմի գետոյն յեղափոխութիւնքն, որ քանի մը հին մայրագաղաքէ հեռանալով և ամբողջ լեռ մը փլցընելով՝ նոր ճամբայ մը բացեր է քարաժայու ծորի մը մէջ ; ուսկից ահագին և սիրալի վիժանօք ցամքը տեղով և փրփրալով սլաքի պէս սուր կ'անցնի . և առջինէն տարբեր տեղ մը կը միանայ կուր գետոյն հետ . . . Շատ տեղ ուր առաջ մեծ գետ մը կ'անցնէր, հիմայ մշակելու դաշտ մ'է : . . .

Կը շարունակո՞յ :